

**Ա/ ԷԿՈՏՈՒՐԻԶՍԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ
ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ**

Ժաննա Գալյան

“Էկոտուրիզմի ասոցիացիա” ՀԿ, 2006թ.

“Էկոտուրիզմը դա ճանապարհորդություն է բնության, բուսական և կենդանական աշխարհների, այնտեղ գտնվող պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրության և դրանց հետ շփման նպատակով” (Ceballos-Lascurain)

Էկոտուրիզմ՝ տուրիզմ, որը նպաստում է բնական և մշակութային ժառանգության ճանաչմանը ու հասկանալուն և բերում է տեղի բնակչությանը այնքան շահույթ, որպիսի մարդիկ գնահատեն ու պահպանեն շրջակա միջավայրը որպես եկամուտի աղբյուր

Էկոտուրիզմի անկյունաքարերն են՝

- բնական և մշակութային ժառանգության պահպանություն
- բնապահպան կրթություն
- տեղի բնակչության բարեկեցության բարձրացում

Առանձնահատուկ պետք է նշել, որ **Էկոտուրիզմը** բնապահպանությունը շահավետ դարձնելով, հանդիսանում է **բնության հատուկ պահպանվող տարածքների** /ԲՀՊՏ/ զարգացման և ղեկավարման գործուն միջոց:

ԲՀՊՏ-ներում և դրանց շրջակայքում Էկոտուրիզմը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ծավալել բազմաբնույթ նախապատրաստական և ընթացիկ գործունեություն հետևյալ ուղղություններով՝

- Տուրիզմի ռեսուրսների և զարգացման ներկա վիճակի գնահատման նպատակով հետազոտությունների անցկացում;
- Տուրիստական գործունեության զարգացման համար պահպանվող տարածքների նախապատրաստում՝ անհրաժեշտ ենթակառուցվածք, տեղեկատվություն և ինտերպրետացիա և այլ;
- Տուրիզմի և ռեկրեացիայի ոլորտում մարդկային ներուժի և մասնագիտացված կադրերի զարգացում;
- Շրջակա միջավայրի վրա տուրիստական և ռեկրեացիոն գործունեության ազդեցության կառավարում և տուրիզմի մոնիտորինգ;
- Տեղական բնակչության մասնակցության ապահովում;
- Մարքեթինգային և գովազդային գործունեություն;
- Համագործակցություն տուրիզմի մասնավոր սեկտորի հետ:

Ստորև համառոտ պարզաբանված են ԲՀՊՏ-ներում տուրիզմի վերաբերյալ միայն այն հարցերը, որոնք հետաքրքրություն են ներկայացնում լայն լսարանի համար:

1. Տուրիզմի նպատակները և խնդիրները պահպանվող տարածքներում

Տուրիզմի նպատակները պահպանվող տարածքներում

- գտնել ուղիներ ինտեգրվելու տուրիզմի տնտեսության մեջ տուրիստների ծախսած գումարից մասնաբաժին ստանալու համար;
- արդյունավետ կառավարել տուրիզմը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու նպատակով

Տուրիզմի խնդիրները պահպանվող տարածքներում

Բնապահպան խնդիրներ

- էկոլոգիական պահպանություն, նեոարյալ կենսաբազմազանության , հողերի, օդի որակի պահպանություն, ինչպես նաև ջրհավաք ավազանների կառավարում:

Մշակութային խնդիրներ

- տեղական բնակչության և այցելուների մոտ շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքների մակարդակի և իրազեկության բարձրացում
- տեղական բնական և մշակութային ժառանգության գնահատում
- կայուն տուրիզմը տեղական և ազգային մշակույթի մաս դարձնելը

Սոցիալական խնդիրներ

- այցելուների գոհունակություն և լավ ժամանց
- տեղական բնակչության ապրուստի բարելավում և որակավորման բարձրացում
- կայուն տուրիզմի գովազդում որպես այլընտրաք մասայական տուրիզմին
- պահպանվող տարածքներ այցելելու և բավականություն ստանալու հնարավորության ընձեռում հասարակության բոլոր շերտերի համար

Տնտեսական խնդիրներ

- տեղական և ազգային տնտեսության լավացում
- տեղական ձեռնարկությունների և աշխատատեղերի ստեղծման խթանում
- տարածքների պահպանության համար աճող եկամուտների ապահովում

2. Շրջակա միջավայրի վրա տուրիստական և ռեկրեացիոն գործունեության ազդեցության կառավարում

Պահպանվող տարածքների տուրիզմի հետ կապված բացասական ազդեցությունը և դրան համապատասխան ծանրաբեռնվածության սահմանափակումները կարող են լինել երեք տեսակի՝

- ա/ **բնապահպան**՝ կապված բնության վրա բացասական ազդեցության հետ;
- բ/ **սոցիալ-մշակութային**՝ կապված բազմաբնույթ մշակութային արժեքների և տեղական համայնքների բնականոն կյանքի վրա բացասական ազդեցության հետ;
- գ/ **հոգեբանական**՝ կապված հանգիստ, բնական միջավայրում գտնվելու այցելուների ցանկության հետ:

Բնության վրա տուրիզմի ազդեցության կառավարման ձևեր

Տուրիզմի բաղկացուցիչներ	Թիրախ խմբեր	Կառավարման միջոցներ
տուրիստների գործողություններ	տուրիստներ	այցելուների կառավարում, գոտիավորում

տուրիզմի ինֆրակառուցվածք	ԲՀՊՏ-ի ադմինիստրացիա, մասնավոր վարձակալներ	գոտիավորում, ՇՄԱԳ, բնապահպան տեխնոլոգիաների և գործունեության կիրառում, “Էկոպլիտակ”
ծառայություններ	տուրօպերատորներ, գիդեր, վարորդներ	կանոնակարգող մեթոդական բնույթի նյութեր, “Էկոպլիտակ”

3. Տեղական բնակչության մասնակցություն

Պահպանվող տարածքներում տուրիզմի զարգացման գլխավոր նպատակը բնության պահպանությունն է: Դա կարող է արդյունավետ լինել միայն եթե տեղական բնակչությունը ունենա կայուն և շոշափելի օգուտներ տուրիզմից:

Ապահովելով եկամուտների այլընտրանքային հնարավորություն պահպանվող տարածքների շրջակայքում բնակվող մարդկանց համար, տուրիզմը այդպիսով կցուցադրի պահպանված բնական ռեսուրսների տնտեսական արժեքը: Կարելի է գտնել պահպանված բնության հետ կապված տուրիզմից տեղի բնակչության օգտվելու ճանապարհները: Դա կնվազեցնի բնության շահագործումը նրանց կողմից և կնպաստի բնապահպան իրազեկության բարձրացմանը:

Ընդհանուր առմամբ նպատակահարմար է կիրառել բնակչության կողմից աջակցություն ստանալու երկու ուղի.

- ներգրավել նրանց պահպանվող տարածքների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործընթացներում
- առավելագույնս ապահովել շրջակա բնակչության համար տուրիզմից օգուտ ստանալու հնարավորությունները:

Մասնակցային պլանավորում և կառավարում

Որպես մասնակցային որոշումներ ընդունելու կարևոր օղակ նպատակահարմար է ստեղծել **մշտական գործող Խորհուրդ**, որը բաղկացած կլինի 3 գլխավոր շահառու կողմերի ներկայացուցիչներից՝ ԲՀՊՏ-ի անձնակազմ, համայնքներ, տուրիզմի սեկտոր: Դա կարող է կազմել նաև մասը ԲՀՊՏ-ի ընդհանուր Խորհրդի:

Այդպիսով հնարավոր կլինի կիրառել տուրիզմի առավել էֆեկտիվ “ներգնից դեպի վերև” ռազմավարությունը:

Մասնակցային պլանավորումը և կառավարումը կարող է վերաբերվել ինչպես բուն պահպանվող տարածքին, այնպես էլ շրջակա համայնքներում իրագործվող տուրիզմի ծրագրերին, որոնք անմիջականորեն փոխկապակցված են:

Տեղական բնակչության տնտեսական մասնակցություն

Տուրիզմում տեղական համայնքների մասնակցությունը կարող է հիմնված լինի ինչպես պահպանվող տարածքների ռեսուրսների վրա, այպես էլ այլ մշակութային և բնական առանձնահատկությունների վրա:

Տեղական բնակչության տնտեսական մասնակցության ձևերը

Մասնակցության ձևը	Պահանջվող հմտությունների աստիճանը	Շահույթ ստացողները	Տեղական տնտեսական զարգացմանը նպաստելու մակարդակը
Ներդրողներին հողատարածքներ վաճառելը	Ոչ մի, բացառությամբ սակարկելու ունակությունից	Առանձին անձինք կամ ամբողջ համայնքը՝ կախված հողի սեփականության ձևից	ցածր
Հողատարածքները վարձակալման հանձնելը կամ օգտագործման իրավունքների փոխանցելը	Ոչ մի, բացառությամբ սակարկելու ունակությունից	Առանձին անձինք կամ ամբողջ համայնքը՝ կախված հողի սեփականության և օգտագործման իրավունքի ձևից	ցածր
Դրսի ներդրողների համար վարձով աշխատելը	Ցածրից մինչև միջին; Բարձր՝ որակավոր աշխատանքի համար	Առանձին անձինք, նեոարյալ չունևոր խավը	միջին
Ապրանքներ մատակարարելը և ծառայություններ մատուցելը	Ցածրից մինչև միջին; Բարձր՝ որակավոր ուղեկցողների համար	Առանձին անձինք, բարենպաստ է համայնքի ավելի գործունյա անդամների համար	միջին
Համայնք-մասնավոր ձեռնարկատեր համատեղ ձեռնարկություն	միջին	Գործունյա անձինք, կամ ամբողջ համայնքը՝ կախված ներդրողի հետ պայմանավորվածությունից	բարձր
Անկախ համանքային ձեռնարկություն	բարձր	Գործունյա անձինք, կամ ամբողջ համայնքը՝ կախված նախաձեռնող խմբի և համայնքի միջև պայմանավորվածությունից	բարձր
Մասնավոր տեղական ձեռնարկություն	բարձր	Գործունյա անձինք	բարձր

Տեղի բնակչության կողմից տուրիզմի բիզնեսին մատակարարվող ապրանքները և մատուցվող ծառայությունները

Տուրիստական ծառայությունների դաշտը	Պահանջվող ապրանքներ ծառայություններ	Տեղական մատակարարողներ
Հյուրանոցային ծառայություններ	ապրանքներ և աշխատուժ	շինարարական կազմակերպություններ, արհեստավորներ

	ներքին հարդարանք	կահույքի խանութներ, արհեստավորներ
	պահպանություն և վերանորոգում	արհեստավորներ
	հավաքարարություն և լվացք	որակավորում չունեցող տեղական աշխատուժ
	պահակություն, այգեպանություն	
Մննդի ծառայություններ	թարմ ուտելիք կամ նպարեղեն (բանջարեղեն, մսեղեն, ձկնեղեն և այլ.)	ֆերմերներ, անասնապահներ, ձկնորսներ
	մշակված ուտելիք	հացթուխներ, մսագործներ, տեղական խանութներ, շուկաներ
	ուտելիքի պատրաստում և մատուցում	որակավորում չունեցող /բացառության խոհարարների / տեղական աշխատուժ ուսուցում անցնելու պայմանով
Տրանսպորտ	տրանսպորտային միջոցներ	վարորդներ, լողալու միջոցներ ունեցողներ
	վառելիք	լցակայաններ
	բեռնափոխադրողներ	որակավորում չունեցող տեղական աշխատուժ
	հեծկան կենդանիներ	ֆերմերներ և անասնապահներ
Տուրերի անցկացում և տարբեր միջոցառումների կազմակերպում	ուղեկցվող տուրեր	որակավորում ունեցող ուղեկցողներ
	մշակութային միջոցառումներ	տեղական մշակութային խմբեր
	ուսուցողական կուրսեր, սեմինարներ	որակավորում ունեցող սովորեցնողներ

Բ/ Կազմակերպության նոր ԲՀՊՏ-ի ստեղծման ընթացիկ ծրագրի համառոտ նկարագրություն

“Էկոտուրիզմի ասոցիացիա” ՀԿ-ն սկսել է նոր ԲՀՊՏ-ի ստեղծման աջակցության ծրագիր, որը ֆինանսավորվում է *Կրիտիկական էկոհամակարգերի համագործակցության հիմնադրամի* կողմից *Վայրի բնության պահպանության հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի* ընդհանուր համակարգման միջոցով:

Ծրագրի անվանումն է՝ Հարավային Հայաստանում ”Արևիկ” նոր բնության հատուկ պահպանվող տարածքի ստեղծման աջակցություն:

”Արևիկ” ԲՀՊՏ-ի ստեղծումը համապատասխանում է Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրին: ԲՀՊՏ-ի ստեղծման նպատակը Սյունիքի մարզի Զանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի և Բարգուշատ լառնաբազուկների լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, էնդեմիկ, հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող տեսակների, բնության և պատմամշակութային եզակի հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, պաշտպանության,

վերականգնման, վերարտադրության» ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

Ծրագրի շրջանակներում նախատեսվող գործունեությունը ընդգրկում է՝

1/ կենսաբանական պաշարների հետազոտում և գույքագրում, ինչպես նաև բաշխվածության քարտեզագրում; 2/ սահմանների նկարագրում և թվայնացված քարտեզի պատրաստում; 3/ մասնակցային կառավարման պլանի մշակում; 4/ անհրաժեշտ ենթակառուցվածքի հիմնում, համապատասխան սարքավորումներով և հանդերձանքով ապահովում; 5/ մասնագիտական ուսուցման դասընթացների անցկացում; 6/ օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթի պատրաստում և ԲՀՊՏ հիմնելու վերաբերյալ պետական որոշման ստացում: